ՁՐԱՌԱՏ

Գյուղամիջում կա 7-րդ դարի խաչաձև եկեղեցու ավերակ, որից մնացել են հյուսիսային խաչաթևի կլոր մասը (բազմանիստ) և հիմնապատերը: Արևմտյան պատի հյուսիսային մասը կիսովին կանգուն է: Այդ պատի հյուսիսային մասում, երեսպատման մի քարի վրա քանդակված են ուռուցիկ խաչեր: Դրանց ներքևի մի մեծ քարի վրա մնացել է 3 տողից շատ մաշված արձանագրություն:

Եկեղեցին կոչվում է Ս. Մինաս:

135. Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան պատի հյուսիսային կողմում, երեք խաչանշանների տակ, 3 տող.

Ռ։ՉԾԳ։ԵՍՍՏԵՓԱՆՈՍ
ՔԱՀԱՆԱՅԱՄՐԻՋԽԱՉՍ
ԻՆՁԵԱՄՈՒՄՆՈՅԻՄՈՅ

Թվին՝ :ՉԾԳ (1304), ԵՍ՝ ՍՏԵՓԱՆՈՍ / ՔԱՀԱՆԱՅ, ԱՄՐԱՌԻ ՁԽԱՉՍ / ԻՆՁ ԵՎ ԱՄՈՒՄՆՈՅ ԻՄՈՅ:

Ծանոթ. *Ս. Բարխուդարյանը թվականի միավորը կարդացել է Դ, մասամբ եղծված լինելու պատճառով չի կարդացել քահանայի անունը:*